

ժէ): Թէ երբ կը գործադրուէին այս զանազան ձեւեր, պիտի տեսնենք յաջորդաբար:

3. — Սովորական պահք: — Այսպէս կը կոչեմ զանոնք՝ որ յատուկ էին չորեքշաբաթու, ուրբաթու եւ շաբաթապահոց:

Ա. Եօթնեկի մէջ երկու օր պահելու սովորոյթն եբրայական ծագումն ունի (Ղկ. ժԸ, 12): Հրեայք սակայն կը պահէին երկուշաբթի եւ հինգշաբթի (Վիգ. Գ, 1531), զորս բրիստոնեայք վերածեցին արդի օրերուն, Յիսուսի մատնութեան ու չարչարանաց յիշատակաւ: Եւ այս օրերն ու խորհուրդը կը յիշուին արդէն «Վարդապետութիւն առաքելոց» (Ը, 1-2) եւ «Առաքելական կանոնք» (ԿՊ) կոչուած անվաւեր՝ բայց հին գրութեանց մէջ, ինչպէս եւ Բ-Գ դարուց Հայրերէն: Ասոնք են հնագոյն պահքերը, մինչդեռ շաբաթապահք աւելի ուշ կ'երեւին:

Այդ օրերուն ուտելի կերակուրք՝ պահողաց ազատ ընտրութեան թողուած էին, «ըստ իւրաքանչիւր կարողութեան», ինչպէս կ'ըսէ Մանդակունին: Ըստ այսմ՝ ոմանք կը շատանային լոկ բանջարով. ուրիշներ՝ միայն ընդով. կային՝ որ քիչ մը հացով գոհ կը լինէին, մինչ ոմանք աւելի